



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները  
և ՀՀ «Կարմիր գրքերը»: Թեմայի ուսուցման  
առանձնահատկությունները 9-րդ դասարանում:

**ԱՌԱՐԿԱ**

Աշխարհագրություն

**ՀԵՂԻՆԱԿ**

Մարիամ Հարությունյան

**ՄԱՐԶ**

Արմավիր

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

«Տիգրան Մեծ»-ի անվան ՌՄՀ վարժարան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ I .....	6
Բնության հատուկ պահպանվող տրածքները և «Կարմիր գրքեր» .....	6
ԳԼՈՒԽ II.....	18
ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները և ՀՀ «Կարմիր գրքերը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները 9-րդ դասարանում .....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	25
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	26
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	27

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը:** Այսօր ամբողջ աշխարհը կանգնած է բնապահպանական հիմնախնդիրների փաստի առաջ, որոնք առաջացել են մարդկության զարգացման հետ համատեղ և մարդու գործունեության արդյունք են:

Բնական ռեսուրսների, դրանցում հատկապես կենսաբազմազանության պահպանությունը ի վերջո պայմանավորվում է նրանով, թե մարդը ինչպես է օգտվում բնական միջավայրից, ինչպես է կանոնավորում դրա շահագործումը: Դա նշանակում է, որ բնությունը պետք է պահպանել ոչ թե բնական ռեսուրսների օգտագործումից ամբողջովին հրաժարվելու միջոցով, այլ դրանք ավելի հաշվենկատ ու գրագետ օգտագործելու, բնական միջավայրի որակը պահպանելու ու բարելավելու միջոցով: Կենսաբազմազանության պահպանությունը համարվում է համամարդկային և բոլոր երկրների ու ժողովուրդների առաջնահերթ հիմնախնդիր: Այս հիմնախնդրի լուծումը պահանջում է ոչ միայն լոկալ, այլև գլոբալ մոտեցումներ: Համայն մարդկության կողմից նման դրսևորման արդյունք է Ռիո դե Ժանեյրոյում 1992թ. ՄԱԿ-ի կողմից «Կենսաբազմազանության» մասին կոնվենցիայի ընդունումը, որին արդեն անդամակցում են շուրջ 180 երկիր: Կոնվենցիայի հիմնական նպատակն է՝ կենսաբազմազանության պահպանությունը, նրա բաղադրիչների կայուն օգտագործումը: Կենսաբանական ռեսուրսների պահպանման հիմնախնդիրն առավել սուր է դրված բնական էքստրեմալ պայմաններով և տարածքի բարձր յուրացվածությամբ առանձնացվող երկրներում, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը, որը վավերացրեց վերոնշյալ կոնվենցիան 1993 թվականի մայիսի 14-ին:

Կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի լուծմանն ուղղված միջոցառումներից է որոշակի բնատարածքների առանձնացումը (ԲՀՊՏ) և դրանք հատուկ պահպանության տակ վերցնելը: Այս՝ հատուկ պահպանության տակ վերցվող տարածքներում մարդու արտադրական գործունեության, այսինքն բնօգտագործման մասին խոսք գնալ չի կարող: Դրանք «բնության էտալոններ» են: Բնության հատուկ պահպանվող տարածքները մակերեսային և ստորերկրյա ջրերի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի՝ օրենքով սահմանված կարգով առանձնացված այն տեղամասերն են, որոնք ունեն հատուկ

Էկոլոգիական, գիտական, բուժական, մշակութային, գեղագիտական արժեք և լրիվ կամ մասամբ, ժամանակավորապես կամ մշտապես ենթական չեն տնտեսական շահագործման: ԲՀՊՏ-ները ստեղծվում են այնտեղ, որտեղ կարող են պահպանվել կենսաբազմազանության հատկապես այն տեսակները, որոնք էնդեմիկ են, որոնց թվաքանակը վտանգված է և այդ համակցությունները գտնվում են անհետացման եզրին:

Ելնելով թեմայի արդիականությունից՝ շատ ենք կարևորում հասարակության շրջանում վերջինիս մասին ամբողջական տեղեկացվածության ապահովումը դեռևս պատանի տարիքից: Լինելով բնության մի մասնիկը՝ նրանք պետք է կարողանան գնահատել այն և իրենց գրագետ ու խնամքով մոտեցման արդյունքում փորձեն քիչ թե շատ լուծել բնապահպանական այս հիմնախնդիրը և բնությունը բերել հավասարակշիռ վիճակի:

**Հետազոտության նպատակը:** Հետազոտական նյութի նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ամբողջական պատկերացում Հայաստանում կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի և դրա լուծմանն ուղղված հիմնական միջոցառումների՝ ԲՀՊՏ-ների և «Կարմիր գրքերի» մասին, զարգացնել նրանց մոտ բնության նկատմամբ գրագետ վերաբերմունք և մոտեցումներ:

**Հետազոտության խնդիրները:**

1. Նկարագրել բնապահպանական հիմնախնդրի, դրա առաջացման գործում մարդկային գործոնի ունեցած դերի մասին:
2. Պատկերացում տալ կենսաբազմազանության պահպանության ուղղված հիմնական միջոցառումների (ԲՀՊՏ, Կարմիր գիրք) մասին:
3. Ներկայացնել բնության հատուկ պահպանվող տարածքների տարատեսակների և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների մասին:
4. Ներկայացնել ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների աշխարհագրական տեղաբաշխվածության մասին:
5. Սահմանել արժեհամակարգ, որտեղ աշակերտը որպես սոցիումի անդամ, այլևս գրագետ և խմանքով մոտեցում կցուցաբերի բնության նկատմամբ և կծավալի բնապահպան գործունեություն:

**Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը:** ՀՀ ԲՀՊՏ-ների և ՀՀ «Կարմիր գրքերի» նյութի վերաբերյալ կատարված հետազոտությունների հիման վրա տվել ենք ամբողջական և մանրամասն նկարագրություն, կատարել ենք որոշակի ընդհանրացումներ ու համակարգումներ: Այս առումով մեր աշխատանքն ունի տեսական կարևոր նշանակություն հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար:

Ելնելով թեմայի դասավանդման առանձնահատկություններից՝ հետազոտության մեջ ներկայացրել ենք վերջինիս արդյունավետ ուսուցման կազմակերպման համար մեթոդական որոշակի նյութեր, որոնք հետագայում կարող են գործնականում օգտակար նշանակություն ունենալ աշխարհագրության ուսուցիչների համար:

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտությունն իրականացվել է ժամանակակից մեթոդների միջոցով: Ուսումնասիրության մեթոդներն ընտրվել են մեր առջև դրված նպատակին, խնդիրներին համապատասխան: Թեմայի ուսուցման ժամանակ առաջարկում ենք կիրառել «Մտագրոհ», «ԳՈԻՍ», «Ֆրայերի մոդելը», «Վենի դիագրամ», «Այբենական աղյուսակ», «Կրճատ նախադասություն», «Վեց W-ների» մեթոդները:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից: Այն ունի եզրակացություններ և օգտագործված գրականության ցանկ:

Հետազոտության ծավալը համակարգչային 27 էջ է:

## ԳԼՈՒԽ I

### Բնության հատուկ պահպանվող տրածքները և «Կարմիր գրքեր»

Հասարակություն-բնություն փոխհարաբերությունների զարգացումը ժամանակի ընթացքում ուղեկցվում է մարդկանց բնության վրա ավելի ինտենսիվ ներգործությամբ: Ինչն էլ հանգեցրել է բնության հավասարակշիռ վիճակի խանգարման, և առաջ են եկել բնապահպանական մի շարք հիմնախնդիրներ: Այս հիմնախնդիրները պահանջում են անհապաղ լուծումներ, այլապես բնական ռեսուրսների և ինքնին բնության սպառումը և ոչնչացումը կարող է բերել նաև հասարակության ոչնչացման: Եվ սա իրենից ներկայացնում է բնապահպանական հիմնախնդիրների վերացման գոբալ լուծումներ և մոտեցումներ:

Չնայած հիմնախնդիրների վերացման գլոբալ մոտեցումներին, հարկ է նշել, որ հասարակություն-բնություն փոխհարաբերությունները ըստ պետությունների և ռեգիոնների տարբերվում են: Եվ դա այն պատճառով, որ առաջին հերթին տարբեր են բնական պայմաններն ու ռեսուրսները, երկրորդ՝ տարբեր են բնական միջավայրի վրա ներգործելու ծավալները և մակարդակները: Ըստ այդմ տարբեր են լինում նաև դրանց փոխազդեցության արդյունքները՝ բնապահպանական տարածքային հիմնախնդիրները:

Բնապահպանական հիմնախնդիրների շարքին է դասվում կենսաբազմազանության պահպանությունը:

Յուրաքանչյուր երկրի համար կենսաբանական ռեսուրսները հանդիսանում են տնտեսության և մարդու բնական միջավայրի հինական հենքը: Եվ դրանց խնայողաբար օգտագործումը, պահպանությունը և վերարտադրության բարձրացումը բխում է բոլորի շահերից: Լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությունն Երկիր մոլորակի առանձնաշնորհային հատկանիշն է, իսկ նրա ռեսուրսները հանդիսանում են անփոխարինելի արժեք և կազմում են մարդու, որպես կենսաբանական էակի, կենսագործունեության հինական մասը: Այդ իսկ պատճառով կենսաբազմազանության պահպանումն այսօր հանդիսանում է համամարդկային և առաջնային հիմնախնդիր:

Հայաստանը հարուստ է ինքնատիպ, բարձրարժեք և էնդեմիկ տեսակներով, որոնց պահպանությամբ զբաղվում է Բնապահպանության նախարարությունը: Հայաստանը ամբողջ աշխարհում հայտնի է իր կենսաբանական ռեսուրսների բազմազանությամբ:

Հայաստանի փոքր տարածքում աճում են բարձրակարգ ծաղկավոր բույսերի ավելի քան 3500 տեսակ, իսկ կենդանիների թիվն ավելի է, քան 17500 տեսակը՝ ներառյալ 536 ողնաշարավոր: Հայաստանի «Կարմիր գրքում» գրանցված են բարձրակարգ բույսերի 452 տեսակ, սնկերի 40 տեսակ, ողնաշարավոր կենդանիների՝ 153 և անողնաշարավոր կենդանիների՝ 155 տեսակ, իսկ մի շարք տեսակներ ընդգրկված են Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) «Կարմիր գրքում»<sup>1</sup>:

Կենսաբազմազանության պահպանությունը իրականացվում է 2 եղանակով: Առաջին դեպքում պահպանությունն իրականացվում է հիմնականում բնության հատուկ պահպանվող տարածքներում, իսկ երկրորդ դեպքում բուսաբանական, կենդանաբանական այգիների և այլ նման հաստատություններում:

Կենսաբազմազանության պահպանության գործում բավականին մեծ դեր է պատկանում բնության հատուկ պահպանվող տարածքներին: Դրանք այն տարածքներն են, որոնք ամրագրված են «Բնության հատուկ պահպանվող տարածքների» մասին օրենքով:

**Բնության հատուկ պահպանվող տարածք՝** ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով առանձնացված տարածքներ և առանձին բնական օբյեկտներ, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ<sup>2</sup>:

ԲՀՊՏ-ների ձևավորումը նպատակաուղղված է տվյալ լանդշաֆտին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի հազվագյուտ և էնդեմիկ տեսակների պահպանմանը և բազացմանը: Հատուկ ուշադրության են արժանի հատկապես անտառային համակարգերը, որոնք հանդիսանում են բազմաթիվ կենդանիների և թռչունների գոյության միջավայր,

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն անտառները, WWF- Հայաստան, 2012թ., էջ՝ 4:

<sup>2</sup> Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=29624>

մեղմացնում են կլիմայական պայմանները, փոքրացնում են ջրի մակերեսային հոսքը, ամրացնում են ավազները, խոչընդոտում են ջրի աղտոտումը: Անտառները մեծ նշանակություն ունեն նաև մարդու կյանքում: Մարդու համար անտառը սննդի, դեղամիջոցների, տեխնիկական հումքի, շինարարական նյութերի աղբյուր է: Անտառները դրական են ազդում մարդու հոգեվիճակի վրա, մեծ նշանակություն ունեն հանգստի և առողջության վերականգնման համար: Հայաստանի բազմաթիվ ԲՀՊՏ-ներ ստեղծվել են անտառների, ինչպես նաև դրանց բնորոշ բույսերի և կենդանիների տեսակների պահպանության համար:

Քանի որ բուսական և կենդանական աշխարհի տարատեսակ ներկայացուցիչներ են առանձնացնում, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին պահանջում է պահպանության ինքնատիպ պայմաններ, առանձնացնում են բնության հատուկ պահպանվող տարածքների մի քանի տիպ: Եվ հաշվի առնելով երկրի ֆիզիկաաշխարհագրական, կլիմայական և էկոլոգիական պայմանները ստեղծվում են տարբեր կատեգորիայի ԲՀՊՏ-ներ:

Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգի սստեղծումն սկսվել է 1958 թ.-ին, երբ հիմնադրվել են առաջին պահպանվող տարածքները՝ 3 արգելոցներ և 6 արգելավայրեր:

Ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգերը վերոնշյալ օրենքով դասակարգվում են.

- Ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական:
- Ըստ կատեգորիայի՝ ազգային պարկի՝ 4, պետական արգելոցի՝ 3, պետական արգելավայրի՝ 26 և բնության հուշարձաններ՝ 230:

Ազգային պարկերը Ազգային պարկը տարածք է (ջրատարածք), որն ընդգրկում է հատուկ էկոլոգիական, պատմամշակութային եւ գեղագիտական արժեք ներկայացնող բնական համալիրներ եւ օբյեկտներ, որոնք բնական ու մշակութային լանդշաֆտների բարենպաստ զուգորդման շնորհիվ կարող են օգտագործվել ռեկրեացիոն, պատմամշակութային ու գիտական նպատակներով<sup>3</sup>:

<sup>3</sup> Տե՛ս <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1777&lang=arm&enc=utf8#3>



Պահպանվող տարածքների այս կարգավիճակն ամենակենսունակն է: Ազգային պարկերն ունեն ֆունկցիոնալ գոտիականությամբ պայմանավորված պահպանության ռեժիմներ և այնտեղ առանձնացվում են հատուկ գոտիներ՝

1. Արգելոցային պահպանության խիստ ռեժիմի անձեռնամխելի տարածքները,
2. Հանգստի կազմակերպման կամ ռեկրեացիոն տարածքները,
3. Տնտեսական գործունեության գոտիներ:

Պետական արգելոցները էկոլոգիական, գիտական պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտվաչ տարածք է (ջրատարածք), որտեղ բնական միջավայրի զարգացման պրոցեսներն ընթանում են առանց անմիջական միջամտության<sup>4</sup>:

գիտական, էկոլոգիական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագտական, հատկանիշներով օժտված տարածքներ են, որտեղ բնական միջավայրի զարգացման պրոցեսներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության: Արգելոցները ստեղծված են ապահովելու բնական միջավայրի և կարևոր տեսակների պահպանությանը: Այստեղ գործում է պահպանության խիստ ռեժիմ՝ ընդհանրապես բացառելով մարդու միջամտությունը: Այս կառույցը ինչպես և ազգային պարկը բնապահպանական, գիտական, սոցիալ-մշակութային գործունեություն իրականացնող ոչ առևտրային պետական կազմակերպություններ են: Արգելոցներում իրագործվում է բնական միջավայրի և կենսաբազմազանության պահպանություն և դրանց գիտական և մասնագիտական ուսումնասիրություն: Մարդկային գործունեությունը պետական արգելոցներում սահմանափակվում է միայն գիտական հետազոտություններով:


Պետական արգելավայրերը մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված տարածքներ են, որոնց սահմաններում ապահովվում են էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի տեսակային պահպանությունն ու վերարտադրությունը: Լինում են հանրապետական և տեղական նշանակության արգելավայրեր: Արգելավայրերի ռեժիմը սահմանվում է դրանց նպատակային ուղղվածությամբ: Այստեղ սահմանափակվում կամ

---

<sup>4</sup>Տե՛ս <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1777&lang=arm&enc=utf8#3>

արգելվում է ցանկացած գործունեություն, որը հակասում է արգելավայրի նպատակային նշանակությանը: Արգելավայրերի առանձնացման հիմնական նպատակներն են ինչպես առանձին հազվագյուտ, անհետացող և գիտաճանաչողական բարձր արժեք ունեցող էկոհամակարգերի և առանձին տեսակների պահպանությունը, այնպես էլ օգտագործվող էկոհամակարգերի ռեսուրսների վերականգնումը: Արգելավայրերը ի տարբերություն արգելոցների կարող են լինել ժամանակավոր և մշտական: Պահպանման խիստ ռեժիմը տարածվում է տարածվում է ոչ թե արգելավայրի ամբողջ բնական համալիրի , այլ դրա մեկ կամ մի քանի օբյեկտների վրա:

**Քարտեզ 1.5**



<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն անտառները, WWF- Հայաստան, 2012թ.:

Բնության հուշարձաններ բնության բացառիկ օբյեկտներ են, որոնք ունեն գիտական և պատմամշակութային հատուկ նշանակություն: Բնության կենդանի հուշարձանների շարքին կարելի է դասել ռելիկտային ծառատեսակները, իսկ անկենդան հուշարձանների շարքին՝ Բազմաթիվ բարձրլենային լճակները, քաղցրահամ և հանքային աղբյուրերը, բնական հողաբուրգերը, հրաբխային կոները և այլ հրաշակերտ գոյացումները: Ներկայումս կատարվում է բնության հուշարձանների գույքագրում և անձնագրավորում:

Ներկայումս ԲՀՊՏ-ները Հայաստանում զբաղեցնում են մոտ 380 հազար հա., որը կազմում է ՀՀ-ի տարածքի մոտ 12,5% (ներառյալ Սևանա լճի մակերեսը):<sup>6</sup>

«Սևան» ազգային պարկը կազմավորվել է 1978 թվականին և ընդգրկում է Սևանա ճի ջրային մակերեսն ու դրան հարող ափամերձ տարածքի ջրից ազատված հատակային գրունտները մինչև շուրջսևանյան ավտոճանապարհը, այդ թվում լիճ թափվող գետերի հունները: Պարկի տարածքը կազմում է 147456 հա (առանց Սևանա լճի մակերեսի 22697 հա): Պարկի նպատակն է պահպանել Սևանը որպես բարձր լեռնային լճային էկոհամակարգի, էնդեմ ձկների (Իշխան, բեղլու, կողակ), բույսերի և կենդանիների տեսակների, այդ թվում էնդեմ հայակական որորի, չվող ջրլող թռչունների հանգստատեղերի պահպանությունը: Ազգային պարկը բազմացման վայր է 1000-ից ավելի բուսատեսակների և ողնաշարավոր կենդանիների 336 տեսակի համար: Պարկի տարածքում կան մնացորդային կաղնուտների և գիհու նոսրանտառներ՝ չորասեր թփերի տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ: «Սևան» ազգային պարկը բնապահպանական գիտահետազոտական հիմնարկ է և իրականացնում է Սևանա լճի և նրա ավազանի համալիրների և բնական պաշարների պահպանությունը և օգտագործման վերահսկումը, ինչպես նաև կոորդինացնում և վերահսկում է հանգստի ու տուրիզմի կազմակերպումը, աջակցում է պարկի տարածքի պատմության և մշակութային հուշարձանների պահպանությանը:

«Սևան» ազգային պարկում, ինչպես և բնորոշ է բոլոր ազգային պարկերին առանձնացված են գոտիներ.

- Արգելոցային գոտին կազմված է 5 արգելոցային տեղամասերից՝ Արտանիշի, Վարդենիսի, Լիճքի, Նորադուզի, Նորաշենի և 10 արգելավայրերից:

<sup>6</sup> Տե՛ս Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն անտառները, WWF- Հայաստան, 2012թ., էջ՝ 4:

- Հանգստի (ռեկրեացիոն) գոտին նախատեսված է հանգստի ու բուժման համար:
- Տնտեսական գոտին ներառում է ձկնորսային և անտառային տնտեսությունները:

«Դիլիջան» ազգային պարկը ստեղծվել է 1958 թվականին և գտնվում է Հայաստանի հյուսիսային հատվածում՝ Փամբակ, Արեգունի, Միափորի և Գուգարաց լեռնշղթաների լանջերին: Այս տարածքով է հոսում Աղստև գետն իր Հովտաջուր, Շտողանջուր, Բլղան, Հաղարծին և Գետիկ վտակներով: Ազգային պարկի տարածքում են գտնվում նաև Պարզ լիճը և Տզրկալիճը: Մինչև 2002 թվականը արգելոց էր և վերջինիս կարգավիճակի փոփոխությունը ազգային պարկի պայմանավորված էր հաիմնականում տնտեսական գործունեության ծավալման անխուսափելիությունով: Վերջինիս տարածքում նույնպես առանձնացված է 3 գոտի՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական:

Ազգային պարկում պահպանության տակ են վերցված կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմաճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները: Այստեղ գերակշռում են հաճարենին, կաղնու մի քանի տեսակներ, բոխին, սոճին, տարածված են նաև լորենու, թխկու, գիհու դրախտածառի պուրակներ, հանդիպում են նաև վայրի պտղատուների տեսակներ՝ հոնենի, տիլենի, սգնի և այլն: Պարկն ունի հարուստ կենդանական աշխարհ: Թռչնատեսակների քանակն անցնում է 100-ից, դրանց թվում՝ կաքավներ, կովկասյան մայրահավ, կասպիական հնդկահավ, գառնանգղ, մորուքավոր արծիվը և այլն: Հանդիպում են կաթնասունների 43 տեսակ, որոնցից են կովկասյան ազնվացեղ եղջերուն, անդրկովկասյան գորշ արջը, աղվեսը, լուսանը, գայլը, վարազը, կզաքիսը, սկյուռը , ջրասամույրը և այլ տեսակներ:

«Արփի լիճ» ազգային պարկը կազմավորվել է 2009 թվականին, գտնվում է Շիրակի մարզում: Ստեղծվել է Ջավախք-Շիրակ բարձրավանդակի և Արփի լճի ավազանի կենսաաբազազանության, մարգագետնատափաստանային, մերձալպյան մարգագետնային և խոնավ տարածքների էկոհամակարգերի, չվող թռչունների բնադրավայրերի և հանգստատեղերի, բնության հուշարձանների պահպանության համար<sup>7</sup>: Այստեղ է բնակվում

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն անտառները, WWF- Հայաստան, 2012թ., էջ՝ 10:

հայկական որորի ամենամեծ գաղութն աշխարհում, այն գանրգրահեր հավալուսնի միակ բնադրավայրն է Հայաստանում և Դարևակու իժի միակ ապրելավարն աշխարհում: Պարկի տարածքում հանդիպում են բնական կաղամախու անտառապատ տարածքներ (Ախուրյանի կիրճում):

«Արևիկ» ազգաին պարկը, ինչպես և նախորդը կազմավորվել է 2009 թվականին և գտնվում է Սյունիքի մարզում: Իր մեջ է ընդգրկում նաև «Բողաքար» արգելավայրը: Զբաղեցնում է Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի տարածքը: Այստեղ հատուկ պահպանության և վերահսկողության շնորհիվ զգալիորեն աճել է մուֆլոնի գլխաքանակը: Այստեղ ժամանակ առ ժամանակ հանդիպում է Արաքսից թափանցած ընձառյուծը: Հանդիպում են գիհու նոսրանտառներ, կաղնու անտառներ և նոսրանտառներ, ինչպես նաև բոխի, թխկի, հացենի և այլ տեսակներ:

*Հայաստանի պետական արգելոցներն են՝ Խոսրովի, Շիկահողի և Էրեբունու արգելոցները:*

«Խոսրովի արգելոցը» կազմավորվել 1958 թվականին և տարածվում է Ազատ և Վեդի գետերի ջրհավաք ավազաններում: Այստեղ ստորին գոտին կիսանապատային է, գերկշռում է բուրավետ օշինդրը: Ըստ տեղանքի բարձրության իրար հաջորդում են ֆրիգանոիդ բուսականությունը, չորասեր կղզիաձև անտառները, չորային լեռնատափաստանները, մերձալպյան և ալպյան մարգագետինները: Անտառներում գերակշռում են կաղնին (խոշորառեջ), բազմապտուղ գիհին, սոճին, հացենին, կովկասյան ցախակեռասի, վայրի տանձենու և նշենու տեսակներ: Արգելոցում ապրում են շուրջ 117 թռչնատեսակներ, որոնցից մեծ արժեք են ներկայացնում մոխրագույն կաքավը, թխակապույտ աղավին, սև անգղը արծիվը, սողուններից՝ տափաստանային իժը, հայկական գյուրզան, կաթնասուններից՝ անդրկովկասյան գորշ արջը, հայկական մուֆլոնը, լայնականջ ոզնին, լուսանը: Արգելոցում շատ են նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձանները:

«Շիկահողի արգելոցը» կազմավորվել է 1958 թվականին և գտնվում է Սյունիքի մարզում՝ Ծավ գետի ջրհավաք ավազանում: Արգելոցի ստորին գոտում տարածված են արաքսյան կաղնին, վրացական թխկին, ցաքու, բազմապտուղ գիու պուրակներ: Այստեղ շատ են էնդեմիկ և ռելիկտային բույսերը: Միջին բարձրություններում աճում են բոխու և վրացական

կաղնու անտառաներ, որոնցում տարածված են վայրի մրգատու ծառատեսակներ: Արգելոցում է գտնվում սոսու հազվագյուտ ընդարձակ պուրակը: Կենդանիներից տարածված են՝ գորշուկը, վարազը, այծյամը, հազվադեպ՝ վայրենակերպը, ընձառյուծը:

«Էրեբունու արգելոցը» կազմավորվել է 1981 թվականին, Երևանից հարավ-արևելք ընկած բլրապատ կիսանապատային տարածքում: Տարածքով փոքր (89 հա), սակայն նշանկությամբ ամենակարևոր պահպանվող տարածքներից է, քանի որ պահպանում է վայրի հացազգիների աշխարհում եզակի գենոֆոնդը՝ գլանաձև այծակնը, արարատյան ցորենը, վայրի միահատիկ ցորենը: Արգելոցն ապրելավայր է մոտ 90 տեսակ ողնաշարավոր կենդանիների համար:

ՀՀ արգելավայրերում պահպանության տակ է վերցված ոչ թե ամբողջ տարածքը, այլ առանձին բուսատեսակներ ու կենդանիներ կամ այլ բնական օբյեկտներ: Ի տարբերություն արգելոցների, այստեղ բնական միջավայրի մյուս տարրերի օգտագործումն արգելված չէ: ՀՀ-ում առանձնացված են 26 արգելավայրային տարածքներ:

**Աղյուսակ 1. ՀՀ արգելավայրերը**

<b>Արգելավայրի անունը</b>	<b>Գտնվելու վայրը</b>	<b>Ստեղծման տարեթիվը</b>	<b>Ստեղծման նպատակը (պահպանությունն ուղղված է)</b>
Զիկատար	Տավուշի մարզ	2010 թ.	Անտառային բնական էկոհամակարգեր
Գյուլագարակ	Լոռու մարզ	1958 թ.	Մոճու դարավոր անտառներ, հազվագյուտ խոտաբույսեր
Իջևան	Տավուշի մարզ	1971 թ.	Հազվագյուտ անտառային կենդանիներ
Արջատիլենու	Տավուշի մարզ	1958 թ.	Ռեիլկտային արջատիլենու և կենու պուրակներ
Գանձաքարի-Վերին Աղանդի	Տավուշի մարզ	1971 թ.	Լեռնային անտառներ
Մարգահովտի	Լոռու մարզ	1971 թ.	Անտառային կենդանիներ
Հանքավանի ջրաբանական	Կոտայքի մարզ	1981 թ.	Հանքային ջրի սնման ավազան
Կովկասյան մարտավարդի	Լոռու մարզ	1959 թ.	Կովկասյան մրտավարդենի

Ախնաբադի կենու պուրակ	Տավուշի մարզ	1959 թ.	Ռեյիկտային կենու եզակի պուրակ
Գետիկի	Գեղարքունի մարզ	1971 թ.	Լեռնային անտառներ, հազվագյուտ անտառային կենդանիներ
Արզական-Մղրաձոր	Կոտայքի մարզ	1971 թ.	Հազվագյուտ և արժեքավոր անտառային կենդանիներ
Բանքսի սոճու	Կոտայքի մարզ	1959 թ.	Բանքսի սոճու եզակի պուրակ
Արագածի ալպյան	Արագածոտնի մարզ	1959 թ.	Քարե լիճ և շրջատող ալպյան մարգագետիններ
Գիհու նոսրանտառային	Գեղարքունիքի մարզ	1958 թ.	Գիհու և կաղնու նոսրանտառներ, բուսական և կենդականակ համակեցություններ
Արարատի որդան կարմիր	Արմավիր մարզ	1987 թ.	Որդան կարմիր միջատի և կիսանապատային բնորոշ բուսականություն, եզակի բուսական համակեցություններ
Խոր Վիրապ	Արարատի մարզ	2007 թ.	Ջրաճահճային էկոհամակարգեր
Գոռավանի ավազուտներ	Արարատի մարզ	1959 թ.	Ավազուտային էկոհամակարգեր
Եղեգիսի	Վայոց Ձորի մարզ	1971 թ.	Արժեքավոր և հազվագյուտ կենդանիներ, վայրի ցորեն
Ջերմուկի ջրաբաական	Վայոց Ձորի մարզ	1981 թ.	Հանքային ջրի սնման ավազան
Ջերմուկի անտառային	Վայոց Ձորի մարզ	1958 թ.	Լեռնային անտառներ, հազվագյուտ կենդանիներ
Հերիերի	Վայոց Ձորի մարզ	1958 թ.	Ռեյիկտային գիհու նոսրանտառներ
Սև լճի	Սյունիքի մարզ	2001 թ.	Սև լիճը և հարակից կենսական աշխարհը, ալպյան մարգագետիններ
Գորիսի	Սյունիքի մարզ	1972 թ.	Անտառային էկոհամակարգեր
Զանգեզուր	Սյունիքի մարզ	2009 թ.	Ենթալպյան մարգագետիններ, մարգագետնատափաստանային էկոհամակարգեր
Բողաքարի	Սյունիքի մարզ	1989 թ.	Կենսական աշխարհի էնդեմ տեսակներ
Սոսու պուրակ	Սյունիքի մարզ	1958 թ.	Սոսու բնական պուրակ

Հայաստանի Հանրապետության ռեյիեֆային առանձնահատկություններով պայմանավորված՝ այստեղ շատ են նաև բնության հուշարձանները, որոնք ունեն գիտական, մշակութային և գեղագիտական նշանակություն: Դրանց շարքին կարելի է դասել Մոզրովի և

Մագիլի քարանձավները, որոնք աչքի են ընկնում իրենց յուրատիպ ապարային կազմով՝ ստալակտիդներով ու ստալգնատներով, Որոտանի կիրճում առաջացած «Մատանի կամուրջը», ջրվեժները, որոնք այստեղ շատ են քանի որ ՀՀ գետերը լեռնային են: Դրանցից նշանավորներն են՝ «Ջերմուկի», «Թռչկանի», «Շաքիի», «Գեղարոտի» ջրվեժները և այլն:

ՀՀ-ի հատուկ պահպանության տարածքներում (ազգային պարկ, արգելոց, արգելավայր) առկա բուսական և կենդանական աշխարհի մի շարք հազվագույտ և ոչնչացման եզրին գտնվող տեսակներ գրանցված են «Կարմիր գրքերում»:

«Կարմիր գիրք»-ը հանդիսանում է կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներից մեկը:

«Կարմիր գիրքը» հազվադեպ և ոչնչացման վտանգի տակ գտնվող օրգանիզմների համակարգված ցուցակն է: Դրանք տարբերվում են ոչ միայն իրենց տարածական ընդգրկմամբ, այլև բովանդակությամբ:

Յուրաքանչյուր «Կարմիր գիրք» առանձնացնում ու խմբավորում է այն տեսակները, որոնք՝

- ✓ Գտնվում են ոչնչացման վտանգի տակ
- ✓ Որոնց քանակը արագորեն կրճատվում է
- ✓ Որոնք ընդհանրապես սակավաթիվ են
- ✓ Որոնք մինչև վերջերս գտնվել են վտանգի տակ, բայց մի շարք միջոցառումների շնորհիվ այժմ վերականգնվում է դրանց քանակը:

Ստեղծվում են նաև առանձին էկոհամակարգերին ու բուսական համակեցություններին նվիրված գրքեր, որոնք կոչվում են «Կանաչ գրքեր»:

ՀՀ բույսերի «Կարմիր գրքում» ընդգրկված են վայրի բուսատեսակների 14%-ը՝ մոտ 452 տեսակ և սնկերի 40 տեսակ, ընդ որում բուսատեսակների մոտ 7%-ի վիճակը նույնպես մտահոգիչ է: Անհետացման վտանգի տակ են գտնվում արարատյան իշամոռուկը, դուրեկան թխկին և տասնյակից ավելի տեսակներ:

Կենդանիների «Կարմիր գրքում» գրանցված է կաթնասունների, սողունների և թռչունների ընդհանուր քանակի մոտ 25%-ը: Թվով մոտ 153 ողնաշարավոր և անողնաշար



կենդանիներ, այդ թվում իշխան ձկան մնացած 2 տեսակ<sup>8</sup>: Կաթնասուններից վտանգման եզրին են գտնվում բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, երկարականջ ոզնին, իսկ սողուններից՝ հայկական իժը, միջերկրածովյան կրիան, թռչուններից՝ սև անգղը, վարդագույն հավալուսնը և այլն:

Կան ողնաշարավորների մի քանի տեսակներ, որոնք բացի ազգային «Կարմիր գրքում» ընդգրկվելը մտել են նաև «Միջազգային Կարկիր գրքի» մեջ: Դրանք են՝ միջերկրածովյան կրիան, հայկական իժը, գանգրափետուր հավալուսնը, կովկասյան սապսանը, առաջավորասիական ընձառյուծը և սպիտակապոչ արծիվը:

---

<sup>8</sup> Տե՛ս Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն: Հայաստան: Հանրակրթական դպրոցի 9-րդ դաս. Դասագիրք, - Եր.: Տիգրան Մեծ հրատ. 2014, էջ՝ 76:

## ԳԼՈՒԽ II


### ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները և ՀՀ «Կարմիր գրքերը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները 9-րդ դասարանում

Այսօր աշխարհում չկա որևիցե մի երկիր, որը կանգնած չլինի բնապահպանական հիմնախնդրի առաջ: Մարդկանց ներգործությունը այնքան է մեծացել բնության վրա, որ բնական լանդշաֆտները հանդիպում են կղզյակների ձևով, և տարեցտարի ավելի է քչանում դրանց քանակը, ինչն էլ իր հերթին բերում է մի շարք այլ խնդիրներ՝ բուսական և կենդանական աշխարհի տեսակային վերացման:

Հայաստանի Հանրապետության բնությունը, ելելով իր աշխարհագրական դիրքից, ռելիեֆի բնույթից բավականին բազմազան է և այստեղ, բացի էնդեմ տեսակները հանդիպում են նաև հարևան տարածաշրջաններին բնորոշ բույսեր և կենդանիներ: Բայց, լինելով տարածքով փոքր և ունենալով տարածքային մեծ յուրացվածություն բնակչության կողմից, Հայաստանը նույնպես բնապահպանական մի շարք խնդիրների առջև է կանգնած: Այդ խնդիրների լուծմանն համար XX դարի կեսերից այստեղ ստեղծվեցին հատուկ պահպանվող տարածքներ և դրանցում առկա ոչնչացման եզրին գտնվող և մեծ արժեք ներկայացնող տեսակները գրանցվեցին «Կարմիր գրքերում»: Եվ չնայած պետական մասշտաբով իրականացվող վերահսկողությանը, դեռ շարունակվում է մարդկանց կողմից բնության վրա ինտենսիվ ներգործությունը, ինչն էլ իր հերթին բնակչության քիչ տեղեկացվածության արդյունքն է:

Ուստի բնության պահպանության գործընթացը պետք է սկսել կրթական մակարդակում՝ բնության նկատմամբ գրագետ վերաբերմունք ուսուցանելով և սերմանելով մատաղ սերնդին: Քանի որ Հայաստանի աշխարհագրությունը ուսուցանվում է 9-րդ դասարանում, ուստի թեմայի շուրջ ծավալած մեր հետազոտական աշխատանքը իրականացվելու է համապատասխան դասարանի համար՝ համակցված ուսուցանման այնպիսի մեթոդներով, որոնք կարող են ավելի արդյունավետ լինել թեմայի յուրացման գործընթացում աշակերտների կողմից:

## Մեթոդ 1. «Մտագրոհ»



Թեմայի ուսուցման սկզբանական թուլում առաջարկում ենք իրականացնել «Մտագրոհ»-ի մեթոդը: Ուսուցչի կողմից առաջ է քաշվում խնդիրը՝ «Բնապահպանակ հիմնախնդիր» և գրի են առնվում աշակերտների կողմից հնչեցված մտքերը խնդրի շուրջ: Այս մեթոդի կիրառումը ուսուցչին կօգնի վեր հանել աշակերտների նախնական գիտելիքները թեմային վերաբերյալ, ինչն էլ իր հերթին կարող է ուղղորդել ուսուցչին նոր նյութի մատուցման հետագա գործընթացը ճիշտ կազմակերպելուն համապատասխան մեթոդների միջոցով:

«Մտագրոհ»-ի արդյունքները վերլուծվում, կատարվում են ճշգրտումներ նոր թեման ներկայացնելու ժամանակ՝ ամբողջացնելով աշակերտների կողմից հնչեցված նախնական մտքերի ու գաղափարների ցանկը:

Թեմայի հիմնական նյութի ուսուցանմանը անցնելիս, որպեսզի էլ ավելի արդյունավետ լինի նոր թեմայի յուրացումը երեխաների կողմից, առաջարկում ենք կիրառել նաև հետևյալ մեթոդները.

**Մեթոդ 2. «ԳՈՒՍ» (գիտեմ-ուզում եմ սովորել-սովորել եմ) <sup>9</sup>:**

<b>ՀՀ ԲՀՊՏ-ներ և «Կարմիր գիրք»</b>		
<b>Գ գիտեմ</b>	<b>ՈՒ Ուզում եմ սովորել</b>	<b>Ս Սովորել եմ</b>
<p>Ի՞նչ է բնապահպանական հիմնախնդիրը:</p> <p>Մարդու ազդեցության մասին բնության վար:</p> <p>Ի՞նչ է «Կարմիր գիրքը»:</p>	<p>ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի մասին:</p> <p>Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում հիմնախնդրի լուծման ուղղությամբ ՀՀ-ում:</p> <p>ՀՀ-ում ԲՀՊՏ-ների ի՞նչ տիպեր են առկա:</p> <p>ՀՀ «Կարմիր գիրքերում» ի՞նչ բուսատեսակներ և կենդանատեսակներ են գրանցված:</p>	<p>Հիմնախնդրի լուծման հիմնական միջոցառումների մասին, որոնք իրականացվում են պետական մաշտաբով:</p> <p>ԲՀՊՏ-ների՝ ազգային պարկ, արգելոց, արգելավայր, կատարած գործառնությունների և դրանց տարածական տեղաբաշխման մասին:</p> <p>«Կարմիր գիրքերի» գործառնությունների և դրանցում ընդգրկված կենսազանգվածի մասին:</p> <p>Բնության վրա մարդու ինտենսիվ (բացաական) ներգործության նվազեցումը կրերի բնության քիչ, թե շատ հավասարակշիռ վիճակի:</p>

<sup>9</sup> Տե՛ս Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդները և տեխնոլոգիաները: Գիտամեթոդական ձեռնարկ, -Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2021, էջ՝ 108:

ԳՈՒՄ-ի մեթոդը կիրառելիս կարողանում ենք բացահայտել աշակերտների նախնական գիտելիքները թեմայի վերաբերյալ, և թե ի՞նչ կցանկանային նրանք սովորել այս թեմայից: Այդ ամենը նախապես գրի է առնվում, այնուհետև նոր թեմայի ներկայացումից հետո աշակերտները լրացնում են երրորդ սյունյակը, թե ի՞նչ նոր բան սովորեցին նրանք թեմայից: Սա բավականին արդյունավետ մեթոդ է, որի միջոցով երեխաները կարողանում են ամբողջական և համապարփակ գիտելիքներ ստանալ: Իսկ ուսուցչին օգնում է պատկերացում կազմել թեմայի յուրացվածության աստիճանի մասին աշակերտների կողմից:


**Մեթոդ 3. Ֆրայերի մեթոդ<sup>10</sup>:**



Ֆրայերի մեթոդով կարելի է իրականացնել ՀՀ «Կարմիր գրքերը» ենթաթեմայի ուսուցումը՝ ուսուցչի կողմից նախապես կազմված հարցադրումներով և օրինակներով կազմված սխեման լրացնելով: Այս մեթոդի միջոցով երեխաները պատկերացում կկազմեն «Կարմիր գիրքի», դրանց հիմնական բնութագրիչներ և գործառույթների մասին:

<sup>10</sup> Տե՛ս Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2004, էջ՝ 245:

Այս մեթոդի հետ զուգահեռ կարելի է կիրառել նաև «Վենի դիմագրամը» և դրանով փորձել ցույց տալ «Կարմիր գրքի» և «Կանաչ գրքի» առանձնահատկություններն ու ընդհանրությունները:



**Մեթոդ 4. Այբբենական աղյուսակ<sup>11</sup>:**

Տառեր	Տեսակի անունը (բույս, կենդանի)	ԲՀՊՏ (ազգային պարկ, արգելոց, արգելավայր)	Տարածման վայրը (մարզը)
Ա			
Բ			
Գ			
Դ			
Ե			
Ը			
Թ			
...			
Ֆ			

«Այբբենական աղյուսակի» մեթոդը կարելի է կիրառել ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների և պահպանության տակ վերցված կենսազանգվածի մասին

<sup>11</sup> Տե՛ս Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնար, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, էջ՝ 34:

ներկայացնելիս: Այս մեթոդով աշակերտները պատկերացում կկազմեն ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի մասին, նրանց տարածման շրջանների մասին և հատուկ պահպանության տարածքներում տիրապետող էնդեմ և արժեքավոր բուսական և կենդանական աշխարհի մասին: Իսկ այբբենական կարգով կազմված լինելը կնպաստի նյութի արագ յուրացմանը և հիշելուն:

**Մեթոդ 5. Կիսատ նախադասություն<sup>12</sup>:**

Կիսատ	Նախադասություն
	Ես այսօր սովորեցի ...
	Ինձ զարմացրեց ...
	Այսօրվա դասի ամենաօգտակար բանը ...
	Ինձ հետաքրքրեց ...
	Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ ...
	Մի բան, որ չհասկացա ...
	Մի բան, որ կուզեի ավելին իմանալ ...
	Այս դասից հետո ես զգում եմ ...
	Այս դասից ավելին կսովորեի, եթե ...

<sup>12</sup> Տե՛ս Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ` 74:

## Մեթոդ 6. Վեց W-ների ռազմավարություն<sup>13</sup>:

Ո՞վ	
Ի՞նչ	
Ինչո՞ւ	
Ե՞րբ	
Որտե՞ղ	
Ինչպե՞ս	

Դասի ավարտին առաջարկում ենք կիրառել «Կիսատ նախադասություններ» կամ «Վեց W-ների» մեթոդներից որևիցե մեկը: «Կիսատ նախադասություններ» մեթոդի միջոցով ուսուցիչի կամ աշակերտի ընտրությամբ լրացվում են նախադասությունները: Ի տարբերություն «Կիսատ նախադասություններ»-ի, «Վեց W-ների» մեթոդը իրականացվում է միայն աշակերտների կողմից երկխոսությունների միջոցով, բայց, իհարկե, ուսուցչի վերահսկողությամբ: Այս մեթոդի միջոցով դասը ամփոփվում է հարցադրում-երկխոսությունների միջոցով, որի ընթացքում փորձում են պարզել, թե ինչ է իրենց տվել վերոնշյալ թեման: Այս մեթոդի միջոցով աշակերտները կկարողանան ՀՀ ԲՀՊՏ-ների և «Կարմիր գրքերի» մասին իրենց կողմից յուրացված թեման ինչպես գործնականում կիրառել, այնպես էլ ճանաչել հայրենի բնությունը իր յուրաքանչյուր մասնիկով և խնամքով մոտենալ բնությանը, որպեսզի չոչնչացնեն այն:

<sup>13</sup> Տե՛ս Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, էջ՝ 72:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում նույնպես հարուստ է կեսաբանական ռեսուրսներով: Այստեղ հանդիպում են և՛ էնդեմիկ տեսակներ, և՛ հարևան տարածաշրջաններին բնորոշ տեսակներ: Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրները, Հայաստանը նույնպես կանգնած է կենսազանգվածի նվազեցման և առանձին տեսակների ոչնչացման եզրին: Այդ իսկ պատճառով այստեղ իրականացվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ՝ սկսած դեռևս XX դարի կեսերց: Այդ միջոցառումները իրականացվում են պետական մասշտաբով Բնապահպանության նախարարության անմիջական հետևողականությամբ:

Հետազոտական թեման իրականացնելիս հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի լուծման համար ստեղծվել են հատուկ պահպանության տարածքներ՝ ազգային պարկեր, արգելոցներ, արգելավայրեր,
- ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի լուծման համար ստեղծվել են տարբեր նշանակության «Կարմիր գրքեր», որոնցում գրանցված են մեր երկրում ոչնչացման վտանգի տակ գտնվող էնդեմ, հազվագյուտ և արժեքավոր բույսեր ու կենդանիներ,
- ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության հիմնախնդրի լուծմանն ուղղված վերոնշյալ միջոցառումների իրականացումը միայն բավարար չէ, հարկավոր է նաև մարդկանց մոտ ինֆորմացվածության մակարդակը բարձրացնել, որպեսզի գիտակցեն խնդրի իրական լրջությունը,
- ինֆորմացվածությունը բարձրացնելու համար հարկավոր է կրթական մակարդակում այս թեմաներին տրամադրել 1-ից ավելի ժամաքանակ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական նյութի եզրահանգումներից ելնելով՝ առաջարկում ենք.

- Ուսումնական նյութը առավել արդյունավետ յուրացնելու համար առաջարկում ենք այս թեմային տրամադրել ոչ թե 1, այլ ավելի շատ ժամաքանակ: Որպեսզի թեմայի յուրացումը աշակերտների կողմից ավելի արդյունավետ լինի, հարկավոր է բացի առաջարկած մեթոդներով ուսուցանելը նաև «Էքսկուրսիայի» մեթոդը իրականացնել, հաշվի առնելով, որ ԲՀՊՏ-ներ կան ՀՀ բոլոր մարզերում:
- Քանի որ հասարակության գրագիտության մակարդակը ապահովում է տվյալ երկրի կրթական համակարգը, ապա հարկավոր է բնության և դրա պահպանության հիմնախնդիրների մասին շատ անդրադառնալ կրթական համակարգի բոլոր ասպեկտներում՝ դրանով բարձրացնելով հիմնախնդրի մասին տեղեկացվածության մակարդակը հասարակության շրջանում:
- Պետական մակարդակով, այդ թվում է և ՋԼՄ-ների միջոցով, քարոզել և ձևավորել բնության նկատմամբ արժեհամակարգ՝ «ԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄ», և բնական ռեսուրսների գրագետ սպառողական, ցուցադրական մոտեցումներ կիրառելով՝ ձևավորել որոշակի հասարակական վարքագիծ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Տեսական գրականություն

1. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն անտառները, WWF-Հայաստան, 2012:
2. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն: Հայաստան: Հանրակրթական դպրոցի 9-րդ դաս. Դասագիրք, - Եր.: Տիգրան Մեծ հրատ. 2014:
3. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=29624>
4. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1777&lang=arm&enc=utf8#3>

### Մեթոդական գրականություն

1. Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդները և տեխնոլոգիաները: Գիտամեթոդական ձեռնարկ, -Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2021:
2. Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2004:
3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008: